

**Տիրոջը**

**Ուիլիըմ Սարոյեանի Նուիրում Յուշ-Երեկոյ**



Փօլ Գալինեան կը ստանայ յուշատախտակը:

Տիրոջի Համազգայինի Հայ կրթական եւ Մշակութային Միութիւնը գեղեցիկ գաղափարը ունեցած էր կազմակերպելու հայ աշխարհածանօթ անգլիագիր գրագէտ եւ թատերագիր Ուիլիըմ Սարոյեանի նուիրում յիշատակի երեկոյ մը:

Ինչպէս ծանօթ է բոլորին, թէ՛ Միացեալ Նահանգներու եւ թէ՛ Խորհրդային Միութեան մէջ նոյն ատեն հրապարակ ելան մեծանուն գրագէտին նուիրում եւ իր յիշատակը յաւերժացնող դրոշմաթուղթեր:

Անկասկած, մեծ պատիւ մըն էր հայ ժողովուրդի արժանաւոր զաւկին տրուած այս բացառիկ յարգանքը երկու մեծ պետութիւններու կողմէ, զոր մենք հպարտանքով եւ անխառն գոհունակութեամբ դիմաւորեցինք:

Ահաւասիկ այս առիթով ալ, Տիրոջի Համազգայինը նախաձեռնեց ու ծրագրեց յիշատակի հանդիսութիւն մը, նուիրում Սարոյեանի:

Գալիֆորնիոյ Ֆրեզնօ քաղաքը հաստատուած հայ արուեստագէտ լուսանկարիչ Փօլ Գալինեանի պատրաստած մէկ ժամնոց, Ուիլիըմ Սարոյեանի կեանքին ու գործին նուիրում վաւերագրական ժապաւէնին տրամադրելի ըլլալը խթան հանդիսացաւ նախաձեռնութեան: Ապա այս վարչութիւնը, կապ պահելով յարգելի արուեստագէտին հետ, հրաւիրեց զինք՝ ներկայացնելու ժապաւէնը հանդիսութեան օրը:

Յայտագրի գեղարուեստական բաժնին, իրենց մասնակցութիւնը բերելու համար, վարչութեան հրաւերին սիրով ընդառաջեցին Թորոնթոյէն, հայրենի սիրուած երգչուհի Վարսենիկ Փափագեանը եւ դաշնակահարուհի՝ Մարիա Մանանեանը:

Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Շարաթ, Հոկտեմբեր 26, 1991ի երեկոյեան ժամը 7:30ին, Լօրընս Թէք համալսարանի թատերասրահին մէջ, մօտ 300 հանդիսականներու ներկայութեան:

Օրուան հանդիսավար Ռապրթ Խաչատրեան, իր բացման խօսքով պարզեց յիշատակի երեկոյին նպատակը եւ տուաւ ամփոփ կենսագրականը տաղանդաւոր ու վաստակաշատ գրագէտին, որ ամերիկեան գրականութեան մէջ մեծ ներդրում ունեցաւ իր ինքնատիպ ոճով՝ առատօրէն արտագրելով բազմաթիւ նորաձեւեր եւ թատերգութիւններ՝ թարգմանուելով բազմաթիւ լեզուներու:

Ապա, հանդիսավար Խաչատրեան

բեմ հրաւիրեց շնորհալի երգչուհի Վարսենիկ Փափագեանը, որ իր սքանչելի եւ վճիտ ձայնով երգեց «Կոռնիկ»ը եւ «Միժեռնակ»ը, դաշնակի ընկերակցութեամբ Մարիա Մանանեանի:

Այնուհետեւ ցուցադրուեցաւ Փօլ Գալինեանի պատրաստած վաւերագրական ժապաւէնը, որ մեծ հետաքրքրութեամբ դիտուեցաւ:

Արդարեւ, յարգելի արուեստագէտին պատրաստած ժապաւէնը արհեստավարժ (professional) արժէք ներկայացնող գործ մըն էր: Այս ժապաւէնը առաջին անգամ ցուցադրուեցաւ Ֆրեզնօյի մէջ, Ուիլիըմ Սարոյեանի նուիրում յատուկ հանդիսութեան ընթացքին, եւ ուր ներկայացուեցաւ իր անուան յիշատակին հրապարակ ելած զոյգ դրոշմաթուղթերը:

Երգչուհի Փափագեան, դարձեալ բեմ գալով, երգեց իտալերէն երկու արիաներ. ապա, ժողովուրդին փափաքին ընդառաջելով երգեց նաեւ երեք հայերէն երգեր, արժանանալով ջերմ ծափահարութիւններու:

Համազգայինի վարչութեան ատենապետ ընկ. Յովակիմ Մանուկեան շնորհակալութիւն յայտնեց յարգելի արուեստագէտներուն՝ Փօլ Գալինեանին, երգչուհի Վարսենիկ Փափագեանին եւ դաշնակահարուհի Մարիա Մանանեանին, որոնք իրենց սիրայօժար մասնակցութեամբ, նպաստեցին ձեռնարկի յաջողութեան՝ հաճելի եւ յիշատակելի երեկոյ մը պարգեւելով ներկայ հանդիսականներուն: Ապա, յարգելի ատենապետը բեմ հրաւիրելով Փօլ Գալինեանը, գեղեցիկ յուշատախտակ մը նուիրեց իրեն, իր պատրաստած արժէքաւոր ժապաւէնին իբրեւ համեստ վարձատրութիւն:

Օրիորդներ Թալին Տէր Յովակիմեան եւ Թինա Նշանեան ծաղկեփունջեր յանձնեցին Վարսենիկ Փափագեանին եւ Մարիա Մանանեանին, իրենց երաժշտական յաջող ելոյթին առ ի գնահատանք:

Ապա խօսք տրուեցաւ Փօլ Գալինեանին: Ան շնորհակալութիւն յայտնեց Համազգայինին, որ առիթ տուաւ իրեն՝ գալու Տիրոջի եւ ներկայացնելու տարիներու աշխատանքով պատրաստած ու Ուիլիըմ Սարոյեանի նուիրում վաւերագրական ժապաւէնը. Ան թելադրեց ամէն առիթներով ծանօթացնել մեր մշակութային արժէքները՝ օտար շրջանակներուն՝ ամենաարդիւնաւոր միջոցը՝ ճանչցուելու իբրեւ զարաւոր մշակոյթ եւ քաղաքակրթութիւն ունեցող ժողովուրդ:

Հանդիսութիւնը փակուեցաւ յոտնկայս «Կիլիկիա» երգով: